

ՕԹՈՊԻՍԻ ԾԱՆՐ ԱՐԿԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԶ

Հայաստանի մէջ երէկ օթոպիւսի արկած մը իյլեց ինը քաղաքացիներու կեանքը: Վիրաւորուեցան 25 ուրիշներ: Երեւանէն Ստեփանաւան ուղղուող օթոպիւսը գահավիժեցաւ կիրճի մը մէջ: Եօթը հոգի կը գտնուի առողջական ծանր վիճակի մէջ, իսկ չորսերուն շարքին է երէխայ մը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱԶԳԱԿ

— Ծ Ր Ա Թ Ե Ր Թ —

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزதாக** جريدة يومية سياسية وأدبية - الدورية للثقافة والإثرائية

1500 Լ.Ո. 74ԳԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 127 (20883) ՈՒՐԲԱԹ, 10 ՕԳՈՍՏՈՍ 2001 10 ԷԶ

ՄԻՔԱԹԻԱՅՑԵԼԵՑ ՍՅԵՅՐԻ

Փոխադրամիջոցներու եւ հանրօգուտ շինութեանց նախարար Նեմիպ Միքաթի երէկ այցելեց Տիւնան, ուր տեսակցութիւն մը ունեցաւ մարոնիներու Նասրալլա Մֆէյր պատրիարքին հետ:

Տեսակցութեան ետք նախարար Միքաթի բաւականացաւ՝ ըսելով. «Ներկայ վիճակին մէջ խօսիլը արժաթ է, իսկ լռութիւնը՝ ոսկի»:

Ծանօթ է, որ Միքաթի Չորեքշաբթի այցելած էր Դաւաակոս, ուր ընդունուած էր նախագահ Պաշտար Ասատի կողմէ:

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՊԱԼԱՏԻՆ ԴԻՄԱՅ ԲՈՂՈՔԻ ՆՍՏԱՅՈՅՑ

Արդարութեան պալատին դիմաց երէկ կատարուեցաւ նստացոյց մը, որուն մասնակիցները կը պահանջէին վերջին օրերուն ձերբակալուածներուն ազատ արձակումը:

Ցոյցին մասնակցեցան ձերբակալուածներու հարապատներ, ինչպէս նաեւ՝ Առնական շարժումի, լուծարքի ենթարկուած լիբանանեան ուժերու եւ Ազատական կուսակցութեան անդամներ:

Նստացոյցին ընթացքին ցուցարարները նախատական խօսքեր ուղղեցին ցոյցին հսկող ապահովական ուժերուն, ինչպէս նաեւ անարգական խօսքեր ուղղեցին լիբանանեան իշխանութիւններուն եւ Սուրիոյ:

Հարցը վարգանալով՝ վերածուեցաւ ցուցարարներուն եւ ապահովութեան ուժերուն միջեւ ընդհարումի: Ձերբակալուեցան տասնեակ մը ցուցարարներ:

Միւս կողմէ, ընդհանուր դատախաչ Ատնան Ատաուն երէկ յայտարարեց, որ նախանցեալ օր ձերբակալուածներէն 53 հոգի ազատ արձակուած է. մինչ կը շարունակուի հարցաքննութիւնը 59 ուրիշներու, որոնց շարքին են Նատիմ Լթէյֆ եւ Թուֆիք Հընտի:

Ատաուն ըսաւ, որ այդ հարցաքննողներուն թղթածրարները յաջորդաբար կը ստանայ:

Ատաուն երէկ պիտուրական դատախաչութեան փոխանցեց 8 ձերբակալուած եւ հարցաքննուած անձերու թղթածրարները:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՈՒ ԸՆԴԱՔ

Փաստաբաններու սենտիքայի խորհուրդը երէկ ժողով մը գումարեց մասնակցութեամբ սենտիքայի նախկին նախագահներու եւ փաստաբաններու՝ Երեսմիսիաններու:

Ժողովը վերահաստատեց նախանցեալ օրուան իր հաղորդագրութեան մէջ ձեռնարկուած կէցածքը. եւ դատապարտեց «Արդարութեան պալատին դիմաց քաղաքայիններու դէմ ապահովութեան ուժերու բռնարարքները, որոնց դէմ բողոքելու համար փաստաբաններուն կը թելադրուի Ուրբաթ օր եւս գործադուլ կատարել»: Ծանօթ է, որ երէկ սենտիքայի որոշումով փաստաբանները գործադուլ կատարեցին:



Ցոյցէն պահ մը:

Սենտիքայի խորհուրդը նախարարաց խորհուրդէն պահանջեց վճռական կեցում՝ որդեգրել այս դէպքերուն առնչութեամբ եւ որոշեց ժողով մը գումարել այսօր կէսօրէ առաջ:

Սենտիքայի նախագահ Միշէլ Էլիան սենտիքայի խորհուրդին անդամներէն պահանջեց այցելել ձերբակալուած անձերուն, որոնց շարքին կը գտնուին փաստաբաններ, ստուգելու անոնց վիճակն ու առողջութիւնը:

Այս ժողովէն առաջ սենտիքայի կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցաւ փաստաբաններու հաւաք մը, որուն ընթացքին խօսք առին երեսփոխաններ:

Հաւաքին ընթացքին խօսք առնելով՝ Էլիան ըսաւ, որ սենտիքան պիտի մնայ ընդհանուր եւ անհատական ապստոյթիւններու պաշտպան:

Շար.ը՝ էջ 10

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ ԱՆՁՆԱՄՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ. ԱՌՆՈՒԱԶՆ 18 ՄԵՌԵԱԼ ԵՒ 90 ՎԻՐԱԽՈՐ



Աճճնասպանական գործողութենէն ետք պարզուած տեսարանը:

Պաղեստինցի մը երէկ կէսօրին ինքզինքն պայթեցուց Երուսաղէմի ԲաՆՈՒԼ Գաշարանի մը մէջ՝ սպաննելով առնուազն 18 հոգի եւ վիրաւորելով աւելի քան 90 ուրիշներ:

Պաղեստինեւ խորաշէջեան տասնամեայ տաղանային սկսելէն ի վեր երէկուան պայթումը ամէնէն մահացուն էր:

«Ապարտո» ճաշարանը, որուն մուտքին պաղեստինցին ինքզինքը պայթեցուց, ամբողջութեամբ քանդուեցաւ՝ մահացած է, եւ կարծիքներու փոխանակում կատարուած է պաղեստինեան շրջաններու եւ հարապատկան շահաւորներու միջեւ:

Պաղեստինցի խորհուրդը ըսաւ, որ Նախագահ Լահճուրի հետ իր հանդիպումը շատ լաւ ընթացած է, եւ կարծիքներու փոխանակում կատարուած է պաղեստինեան շրջաններու եւ հարապատկան շահաւորներու միջեւ:

Շար.ը՝ էջ 9

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԳՆԱՀԱՏԵՑ ԲԱՆԱԿԻՆ ԴԵՐԸ

Նախարարաց խորհուրդը երէկուան իր ժողովին լսեց ներքին գործոց նախարար Էլիան Մըրէն եւ պաշտպանութեան նախարար Խալիլ Հըրաուիէն տեղեկութիւններ՝ վերջին օրերուն երկրին մէջ տեղեկութեան իրադրական կատարուած ձերբակալութիւններուն տուեալները պատճառներուն մասին: Ժողովին կը բացակայէր պօսաշրջութեան նախարար Քարամ Քարամ:

Ժողովի աւարտին տեղեկատուութեան նախարար Էլիան Մըրիսի յայտարարեց, որ նախարարաց խորհուրդը քննարկած է կացութիւնը եւ տուած հետեւեալ որոշումները:

«Նախարարաց խորհուրդը կը հաստատէ իր դերակատարութիւնը՝ իրեն գործադիր իշխանութիւն, ինչպէս նաեւ հսկելու բոլոր մարմիններուն գործունէութիւններուն եւ աշխատանքներուն. առանց բացառութեան:

Նախարարաց խորհուրդը կը գնահատէ բանակին դերը՝ քաղաքացիական ապահովութեան հսկելու եւ հալոյթի նիւթին արժանապատուութիւնը պաշտպանելու համար:

Նախարարաց խորհուրդը ապահովական եւ դատական բոլոր մարմիններուն կը հաստատէ, որ օրէնքը պէտք է գործադրուի առանց խտրութեան:

Նախարարաց խորհուրդը տեղեկատուութեան նախարարին կը յանձնարարէ գործադրել տեղեկատուութեան մարդիկ օրէնքները՝ օրինապահներուն դէմ, տեղեկատուութեան ազգային խորհուրդին հետ գործակցաբար»:

Նախարար Մըրիսի յայտեց, որ ժողովին նախարարները մանրամասնօրէն քննարկած են վերջին օրերու ապահովական միջոցառումները, հարցումներ ուղղած են. նկատողութիւններ կատարած են եւ յայտնած վերապահութիւններ: Ան ըսաւ, որ մեծ թիւով նախարարներ տեղեկ չէին ձեռք առնուած միջոցառումներէն:

Նախարար Մըրիսի կատարեց, որ կառավարութիւնը դէմ է երկիրը ապակառնուցող բոլոր փորձերուն եւ չի հանդուրժեր Լիբանան - Սուրիա եղբայրական յարաբերութիւններուն ուղղուած որեւէ հարուած:

ՍԱԹԸՐՖԻԼՏ ԱՅՑԵԼԵՑ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ

Նախագահ Գօր. Էմիլ Լահճուր երէկ ընդունեց Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի փոխ օգնական Տէյֆա Սաթըրֆիլտը:

Նախագահ Լահճուր Սաթըրֆիլտի ըսաւ, որ անհրաժեշտ է Միացեալ Նահանգներու ազգու միջամտութիւնը, որպէս իշխող Իսրայէլի վարչապետին, որ շարունակէ պաղեստինցիներ մաքրագործելու իր ծրագիրը, նախքան հարցի պատժարացումն ու շրջանային ապահովութեան սպառնալու:

«Իսրայէլն է պատասխանատուն պաղեստինեան շրջաններու հանդարտեցման փորձերու արդեւակումբին», ըսաւ Նախագահ Լահճուր, ինչպէս նաեւ փորձեց վերջինը Ութի ճարտարարուեստականացած երկիրներու վեհաժողովին որոշումն էր:

«Իսրայէլը սանձելու արարական եւ երրօրական պահանջներու Ուաշինկթընի կողմէ անտեսուած պատճառ պիտի

դառնայ Շարունի որդեգրած վարչապետութեանց ոճի սաստկացումին, պիտի կարծրացնէ արարական կեցումները եւ կրնայ վնաս պատճառել արարած երկրիկեան յարաբերութիւններուն», ըսաւ հանրապետութեան նախագահը:

Շար.ը՝ էջ 9

ԱՐԵՎԱԶԻՈՅ ՄԷՋ ՌՈՒՍԵԿԱՆ ԽԱՐԻՍԻՆԻ ԳԾՈՎ

ՌՈՒՍԻԱ - ՎՐԱՍՏԱՆ ԲԱՆԱՎԵՃԸ՝ ԴԵՊԻ ԼՈՒԾՈՒՄ

Ռուսիա եւ Վրաստան անջատողական Աբխազիոյ մէջ գտնուող ռուսական պիտուրական խարխիւի մը գծով ծայր տուած բանավեճը լուծելու ընթացքի մէջ կը գտնուին. յայտնած է Վրաստանի արտաքին գործոց նախարար Իրաքի Մենակալիշվիլի Չորեքշաբթի օր:

Ան ըսած է, որ Մոսկուա համաձայնած է իր ուժերը եւ սարքերը հեռացնել. սակայն անիկա շրջանին մէջ ալ տեղ հաստատուած խաղաղարար իր ուժերէն գումարակ մը պիտի ղրկէ պարպուած խարխիւին պահպան կենալու համար:

Մենակալիշվիլի յայտնած է, որ հեռացման յստակ պայմանները պիտի որոշուին յառաջիկայ շաբաթ Մոսկուայի մէջ վերսկսելիք բանակցութիւններուն:

Ռուսիա 1999ին Պոլսոյ մէջ կայացած ԵԱՀԿի վեհաժողովին գոյացած համաձայնութեամբ մը ընդունուած էր փակել Աբխազիոյ մէջ «կուտուրա» խարխիւը, Թիֆլիսի մօտակայ այլ խարխիւի մը հետ:

Սակայն ռուսական ուժերը Յուլիս Ի ժամկէտը չէին յարգած՝ Աբխազիոյ խարխիւէն հեռանալու գծով:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱԼԻԵԼ ԼԱԲԱՏԵՍ ԶԵ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻՆ ՆԿԱՏՄԱՍԲ

Ակրպէճանի նախագահ Հայտար Ալիե ֆրանսական «Լը Ֆիկար» օրաթերթին կողմէ հրատարակուած հարցազրոյցի մը մէջ ըսաւ, որ ներկայիս յառաջխաղացք չի տեսնել Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման գծով:

Ալիե կասկած յայտնեց Ապրիլին Հայաստանի նախագահ Ռուպէր Բոչարեանի հետ Ռաշիսկընի մէջ ունեցած իր հանդիպումին արդիւնքներուն մասին. ան սակայն նշեց, որ կարելի չէ ըսել, որ լուծման բոլոր ուղիները փակ են:

Ակրպէճանի նախագահին համաձայն, երկրին մէջ ընդդիմութիւնը պատերազմ կ'ուզէ Հայաստանի դէմ, եւ թէ անիկա այս կացութիւնը կ'օգտագործէ իշխանութեան հասնելու համար:

Միւս կողմէ, Հայտար Ալիե հասկնալի գտաւ Ռուսիոյ քաղաքականութիւնը Չեչենիոյ նկատմամբ:

Պիեթրուսիոյ վարչապետ Վլադիմիր Շրոշիւի հետ իր հանդիպումին Ալիե ըսաւ, որ Ռուսիա Չեչենիոյ մէջ ճիշդ քաղաքականութիւն կը վարէ, հսկայական արիւնահեղութեան եւ մեծ թիւով մարդոց սպանութեան: «Ռուսիա ամէն ինչ կ'ընէ պահպանելու համար իր հողային անբողջականութիւնը», անցնուց ան:

Ալիե վարմանք յայտնեց, որ միջազգային ընտանիքը անտարբերութիւն կը ցուցաբերէ Ակրպէճանի հողային անբողջականութեան բռնաբարումին դէմ՝ Լեռնային Ղարաբաղի տագնապին պարագային:

ԱՅՍ ԿԻՐԱԿԻ՝ 12 ՕԳՈՍՏՈՍ 2001

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 6ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ԲԱՅՈՒՄԸ

ԸՈՎԱՆԱԽՈՐՈՒԹԵԱՄԲ՝ ՆԱԽԱԳԱԸ ԶՕՐ. ԷՄԻԼ ԼԱՇՈՒՏԻ

Տեղի կ'ունենայ Պուրճ Համուտի Քաղաքապետարանի մարզադաշտին վրայ, երեկոյեան ժամը 6:00ին:

ՄՈՒՏԸ ԱՆԱՏ

Բացումէն ետք ժողովրդային խրախճանք Շ.Մ.Ը.Մ.ի «Պօղոս Արիս» դաշտին վրայ, մասնակցութեամբ՝ Շ.Մ.Ը.Մ.ի արտասահմանի պատուիրակութիւններուն:

ԻՐԱՔՅԻ ՔԻՒՐՏԵՐ ԼԻԲԱՆԱՆԵՆ ԻՍՐԱՅԷԼ ԱՆՑԱԾ ԵՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄ. 9 (ՌՈՅԹԸՐԸ).- Տասնեակներով իրաքցի քիւրտեր Լիբանանէն Իսրայէլ անցան քաղաքական ապաստանեալի իրաւունք խնդրելու համար. յայտնեց իսրայէլացի զինուորական մը. Հինգշաբթի օր:

Քիւրտերը կրցած էին Իսրայէլ մուտք գործել Ղաժար գիւղի մօտերէն. որ ՄԱԿի սահմանաին գիծով մը բաժնուած էր անցեալ տարի հարաւային Լիբանանէն՝ Իսրայէլի նահանջէն ետք:

Բանակի ճայնապիւղի կայանը յայտարարեց. որ քիւրտերը զինուորներուն յայտնած են. թէ Իրաքէն եկած քիւրտեր են. կ'ապրին Լիբանանի մէջ եւ որոշած էին փախուստ տալ:

Չայնասպիւղի կայանը նշեց նաեւ. որ Իսրայէլ Լիբանանի վերադարձուց քանի մը շաբաթ առաջ Իսրայէլ փախչող խումբ մը քիւրտեր եւ աւելցուց. որ զինուորականներ կը տեսնեն այս խումբը եւս Լիբանան զրկելու հաւանականութիւնը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Համալգայինի Մելանքթուն եւ Հայկ Արսլանեան ձեւարանի տնօրէնութիւնը ուրախութեամբ կը յայտնէ. որ լիբանանեան պրիօվէի ներկայացած բոլոր աշակերտները (45 հոգի) յաջողած են. մէկ աշակերտ շատ լաւ եւ ութ աշակերտներ լաւ յիշատակութեամբ: Ստորեւ պրիօվէի տիրացած աշակերտներու ցուցակը.-

Խաժակ Արեւեան. Տորիս Արզումանեան (լաւ). Ծովակ Արապաղեան. Ռուսում Յովհաննէսեան (լաւ). Ռուբէն Վարդանեան. Ռիթա Գուրումեան. Ռուպինա Խայեաթ. Սեդա Քեօսեան. Սարգիս Պայրամեան. Սիմոն Մաճառեան. Սարին Գուրումեան. Սեբուժ Չամիչեան (շատ լաւ). Սարին Եղիապարեան (լաւ). Սինթիա Միքայէլեան (լաւ). Սոսէ Գասպարեան. Շանթ Սաղապարեան. Ալին Սարաֆեան. Արին Արմէնեան. Արեւիկ Կարապետեան. Արին Խաչերեան. Արա Գուճանեան. Ալին Գալապալեան (լաւ). Ալիք Քիրիաթ. Ալին Պալթայեան. Օլիվիա Նաճարեան. Պետրոս Պողոսեան. Բարտի Ճուլֆայեան. Փանոս Աբրահամեան. Բայիկ Խոլըրլարեան (լաւ). Դալար Հարմանտայեան. Ժան Նազգաշեան. Շադիկ Կոկոնեան (լաւ). Շադիկ Ճիւլպաշեան. Թամար Թելֆեան. Դաւիթ Գալպանեան. Վանան Մանգիկեան. Գլարա Տեմիրճեան. Կասիա Մուրատեան. Կարօ Լուսարարեան. Մարիա Ղարիպեան. Մարիա Պոյաճեան. Նարէ Գալէմբերեան. Նուպար Փեշտիմալճեան (լաւ). Հրակ Ղուկասեան եւ Հրայր Պողոսեան:

ԹՐԻՄՊԸԼ ԿԸ ՄԵՐԺԵ ԻՐԱԿ ԱՊԱԶԻՆՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԸ

ՊԵԼՃԱՍԹ. 9 (ՌՈՅԹԸՐԸ).- Հիւսիսային Իրլանտայի բողոքական Ալթըր Եռնիլընիսը կուսակցութեան ղեկավար Տէյվիտ Թրիմպըլ Հինգշաբթի օր մերժած է ընդունել իՐԱԿ ապագին-ման առաջարկը. գայն «Հատ քիչ, շատ փոքր» նկատելով:

ԻՐԱԿ զինեալները հաղորդագրութիւն մը հրապարակած են հաստատելով նախապէս տրուած խոստում մը՝ իրենց գէն-քերը «ամբողջովին եւ ստուգելի ձեւով անգործածելի դարձնելու» իմաստով:

Սակայն Թրիմպըլ այս յայտարարութիւնը միայն խօսք նկատած է եւ յայտնած, որ հանրապետական գինեալները պէտք է իրենց գէնքերը յանձնելու սկսին, յարգելով 1998ին գոյացած անկիւնադարձային համաձայնութիւն մը:

Թրիմպըլ անցեալ ամիս գէնքերուն հարցով

հարձարած էր Առաջին նախարարի իր պաշտօնէն՝ Հիւսիսային Իրլանտայի իշխանութիւնը թափեցող կառավարութեան մէջ: Չայն փոխարինող անձնաւորութեան ընտրութեան համար ժամկէտ ճշգրտած է Շաբաթ կէս գիշեր:

Եթէ համաձայնութիւն չգոյանայ, Բրիտանիոյ Հիւսիսային Իրլանտայի նախարար Ճոն Ռիտ պէտք է նահանգին մէջ նոր ընտրութիւններ կատարէ կամ առկաիւ նահանգային հիմնարկութիւններու գործունէութիւնը:

Եթէ համաձայնութիւն չգոյանայ, Բրիտանիոյ Հիւսիսային Իրլանտայի նախարար Ճոն Ռիտ պէտք է նահանգին մէջ նոր ընտրութիւններ կատարէ կամ առկաիւ նահանգային հիմնարկութիւններու գործունէութիւնը:

Եթէ համաձայնութիւն չգոյանայ, Բրիտանիոյ Հիւսիսային Իրլանտայի նախարար Ճոն Ռիտ պէտք է նահանգին մէջ նոր ընտրութիւններ կատարէ կամ առկաիւ նահանգային հիմնարկութիւններու գործունէութիւնը:

Եթէ համաձայնութիւն չգոյանայ, Բրիտանիոյ Հիւսիսային Իրլանտայի նախարար Ճոն Ռիտ պէտք է նահանգին մէջ նոր ընտրութիւններ կատարէ կամ առկաիւ նահանգային հիմնարկութիւններու գործունէութիւնը:

ԹԵԹՈՎՈՅԻ ՄԵԶ՝ ՆՈՐ ԲԱԽՈՒՄՆԵՐ

ՍՔՈՓԻԷ. 9 (ՌՈՅԹԸՐԸ).- Մակեդոնական ուժերուն եւ ծագումով ալպանացի ըմբոստներուն միջեւ Հինգշաբթի օր նոր բախումներ ծայր տուած են հիւսիսարեւմտեան Թեթովօ քաղաքին մէջ, Չորեքշաբթի գիշեր տեղի ունեցած բախումներուն ուսիկանի մը սպանութենէն ետք:

Կառավարութիւնը Հինգշաբթի օր սուգի օր յայտարարած է Չորեքշաբթի օր սպանուած 10 զինուորներու համար:

Թերթերը յոռետես էին Հինգշաբթի օր արեւմտեան միջնորդութեամբ խաղաղութեան ծրագիրի վճարողութեան գծով, որուն նպատակը պաշտնական նոր պատերազմի մը կանխարգիլումն է:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԱՄ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՕԴԱՆԱԻ ՄԸ ՎԱՐ ԱՌՆՈՒԱԾ Է

ՊԱՂՏԱՏ. 9 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրաքեան հալօդային զէնքեր հաւանաբար հարուածած են ամերիկեան կամ բրիտանական պատերազմական օդանաւ մը երկրին հիւսիսային շրջանին մէջ. յայտնեցին իրաքեան աղբիւրներ. Չորեքշաբթի օր:

Բանակի բանբեր մը յայտնեց. որ օդանաւը, որուն խարխալը Թուրքիա կը գտնուէր. 22 թռիչքներ կատարած էր Իրաքի հիւսիսային շրջանին վրայ:

«Փաստեր ցոյց կու տան օդանաւու մը հարուածուելուն հաւանականութիւնը». ըսաւ բանբերը:

Միւս կողմէ. Թուրքիոյ հարաւ գտնուող «Ինճիրիք» խարխալին մէկ բանբերը ըսաւ «Այս յուրը պիտի է: Մեր օդանաւերը երկրի թռիչքներ կատարեցին եւ բոլորն ալ ապահով վերադարձան: Մեր օդանաւերուն վրայ կրակ բացուած էր. սակայն անոնք չէին հակադարձած»:

Իրաքեան բանբերը յայտնեց. որ բրիտանական եւ ամերիկեան օդանաւերը հարաւային Իրաքի արգիլեալ գօտիին վրայ ալ թռիչքներ կատարած են՝ օգտագործելով Քուէյթի եւ Սէուական Արաբիոյ մէջ խարխալներ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի գիտութիւն մեր սիրելի ժողովուրդին. այսու կը հաղորդենք. թէ Լիբանանի թեմի Գաւառական ժողովը, 20 Յուլիս 2001ին Քաղաքի Ազգային առաջնորդարանի դահլիճին մէջ գումարած նիստին, ընտրեց հետեւեալ ազգայինները. Իբրեւ Լիբանանի թեմի պատգամաւորներ մասնակցելու. 15-20 Նոյեմբեր 2001ին. Անթիլիասի կաթողիկոսարանին մէջ գումարուելիք Մեծի Տանն Կիլիկիոյ Ազգային Ընդհանուր ժողովին:

Վահագն Դաւիթեան. Գեորգ Քէշիշեան. Մկրտիչ Մկրտիչեան. Նապարէթ Պարսումեան. Երուանդ Մոնոֆարեան. Գեորգ Գանտահարեան. Արթուր Նապարեան. Արա Յակոբեան. Գրիգորիս Պողարեան. Ժիրայր Դանիելեան. Մկրտիչ Պուլտուգեան. Վալգէն Չէքիճեան. Հրաչ Հաճէթեան. Չոհրապ Թորիկեան. Տիգրան Ճիւլպաշեան:

Փոխ անդամներ. Վրէժ Սապունճեան. Ժան Ներսիսեան. Սագօ Արմէնեան. Արա Պաղտասարեան:

ԴԻՒԼՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ


ՇԱՐԵՅԷ 15,000 ՏՈԼԱՐԻ ԱՐԺԷՔԱԻՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ

Win up to
\$15,000 in prizes

- Peugeot 206
- Trip to Cyprus for 2 persons (6 nights)
- 2 FUJITSU air condition
- 2 General Electric washing machine
- Sony HI FI DX5
- Philips DVD 711 with zoom
- Panasonic TV 21 inch
- Sony TV 21 inch
- Continental oven



- Peugeot 206 ինքնաշարժ մը
- 2 անձի Կիպրոս ձամբորդութիւն (6 գիշեր)
- 2FUJITSU էր ընտխսիոնէ
- 2 General Electric լուացքի մեքենայ
- Sony հայ ֆայ Dx5
- Philips DVD 711 գունով
- Panasonic հեռատեսիլ 21 ինչ
- Sony հեռատեսիլ 21 ինչ
- Ընճրինճրալ փուռ



ԱՆԳԱՐԱՅԻ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ
ԿՐՆԱՅ ՑՆՑԵԼ ՕԹԱՆԸ

Շար.ն' 59 1

